

# ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ ՎՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ և Նորին Սրբության սեպտեմբեր 20 1972 թվակիր կոնդակով Վրաստանի հայոց թեմի նոր առաջնորդական տեղապահ նշանակվեց Մայր Աթոռի միաբան տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը: Այդ առթիվ վրահայոց նախկին առաջնորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը և նորընտիր առաջնորդական տեղապահը սեպտեմբերի 22-ին, ուրբաթ օրը, մեկնեցին Թբիլիսի՝ թեմի պաշտոնական հանձնումն ու ընդունումը կատարելու համար:

Սեպտեմբերի 24-ին, կիրակի օրը, Խաչվերացի տոնի առթիվ, Թբիլիսիի հայոց ս. Գևորգ առաջնորդանիստ եկեղեցում իր առաջին ս. պատարագն է մատուցում տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը:

Ս. սեղանին սպասարկում էին տ. Տիրայր քհն. Կոնսուլյանն ու տ. Տաթև քհն. Հարությունյանը:

Եկեղեցին լիքն էր հավատացյալ ժողովրդով ու ուխտավորներով:

«Հայր մեր»-ից առաջ հնչեց «Հրաշափառ Աստված» շարականը, որի հնչյունների տակ ս. սեղան բարձրացվեց Վեհափառ Հայրապետի սեպտեմբեր 20 1972 թվակիր սրբատառ կոնդակը, որով առաջնորդական տեղապահ էր նշանակվում տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը: Այն հանդիսավորությամբ ընթերցեց տ. Տիրայր քահանան:

Սրբատառ կոնդակի ընթերցումից հետո խոսք առավ տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը, որը, հաղորդելով Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները, հավատացյալ ժողովրդին ծանոթացրեց առաջնորդական նոր տեղապահին և վստահեցրեց, որ առաջնորդական տեղապահը իր երիտասարդական ավյունը չի խնայի վրահայ ժողովրդի հոգևոր կյանքի ծառայության, հայ եկեղեցու պայծառության ճվիրական գործում:

Այնուհետև քարոզում է նորընտիր առաջնորդական տեղապահ տ. Գևորգ վարդապետը՝ օրվա տոնի՝ Խաչվերացի խորհրդի մասին. «Եւ որ ոչ առնու զխաչ իւր՝ և գայ զկնի իմ, չէ ինձ արժանի» բնաբանով: Ապա տ. Գևորգ վարդապետը շնորհակալություն է հայտնում Վեհափառ Հայրապետին, որ իրեն վստահել է այս պատասխանատու և ծանր պաշտոնը, և հույս է հայտնում, որ օգնականությամբն Աստուծո և օրհնությամբն Հայոց Հայրապետի կաշխատի արդարացնել Նորին Սրբության ակնկալությունները, որ ամենայն ջանք և ավյուն չի խնայի պայծառացնելու համար հայոց եկեղեցին՝ հուրախություն և ի մխիթարություն ժողովրդյան:

Ս. պատարագից հետո թեմական և եկեղեցական խորհուրդների նախաձեռնությամբ տրվեց ճոխ ճաշկերույթ՝ ի պատիվ նախկին առաջնորդ տ. Կոմիտաս արքեպիսկոպոսի 15-ամյա գործունեության և նոր տեղապահի նշանակման:

Սեպտեմբերի 25-ին, երկուշաբթի օրը, ժամը 17-ին, տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը և տ. Գևորգ վարդապետը պաշտոնական այցելություն են տալիս՝ ընկերակցությամբ թեմական խորհրդի ատենապետ Սուրեն Ավչյանի, Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս Նորին Սրբություն Դավիթ Ե-ին, որը

վրաց կաթողիկոսարանում ջերմորեն ընդունում է նրանց:

Սիրալիր զրույցի ընթացքում հայ եկեղեցու պատվիրակությունը վրաց տ. Դավիթ Ե կաթողիկոսին հաղորդում է նաև Հայոց Հայրապետի ողջույնները:

Նորին Սրբությունը հայրական իր օրհնությունն է բաշխում հայ եկեղեցու ներկայացուցիչներին և իր ուրախությունն է հայտնում վրահայոց թեմի առաջնորդական նոր տեղապահի նշանակման առիթով, շնորհավորում տ. Գևորգ վարդապետին և նրան բարեմաղթում հաջողություն իր նոր ու պատասխանատու պաշտոնում:

Այնուհետև Տ. Դավիթ կաթողիկոսը սեղանի շուրջ է հրավիրում տ. Կոմիտաս արքեպիսկոպոսին, տ. Գևորգ վարդապետին և Ս. Ավչյանին: Տ. Դավիթ Ե-ի շուրջը տեղ էին գրավել տ. Զինովի միտրոպոլիտը և տ. Գայոս եպիսկոպոսը:

Հայրապետական ճոխ սեղանին աչքի էին ընկնում վրաց խաչապուրին և հայոց լավաշը, որոնք խորհրդանշում էին վրաց և հայոց եկեղեցիների և ժողովուրդների դարավոր բարեկամության ամրապնդումը:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է վրահայոց թեմի նորընտիր առաջնորդական տեղապահ տ. Գևորգ վրդ. Սերայդարյանին, բարեմաղթում նրան հովվական-թեմական բեղուն պաշտոնավարություն, միաժամանակ էկումենիկ ոգով ամրապնդելու համար նաև հայ և վրաց եկեղեցիների և ժողովուրդների համագործակցությունը, հոգևոր, մշակութային դարավոր կապերի խորացումն Քրիստոսի սիրո, Ավետարանի լույսի ներքո՝ աշխարհի խաղաղության և ժողովուրդների եղբայրության ճանապարհի վրա: